

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

ՆՈՒԷՐ՝ Տ. ԵՂԻՇԷ Ս. ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ (ԵՂԻՎԱՐԴ)

(ՓՈԽԱՆ ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔԻ)

Գ.

Ուխտագնացութիւն . —

Եղիշէի Ս. Գեորգեման — Չարահան Ս. Նշան: Բառասո՛ւն տարի առաջ էր, 1910 ին, իմ շրջանաւարտութեան տարին: Մի քանի խննթ ընկերներով սրոշեցինք արշաւ մը կատարել Ռչտունիքի պատմական վայրեր, առաջին հերթին, Եղիշէի Ս. Գեորգեման, Ոստանի Չարահան Ս. Նշան: Ապա Արատս լիբան գաղաթը անոր ճգնարան-քարայրը: Այս ուխտն է որ կը նորոգեմ, քառասո՛ւն տարի ետք, Ս. Նարեկացիի զօրութիւնով և անոր շնորհքներով:

«Պանծա՛յբ դուք ընդ հայրենասիրութիւն
[ձեռ. —
«Նորոգեցե՛ք ապա գլիօսակա նախ-
[նեաց»:

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ

«Գուցէ գտանէ զրութիւնս քանի մը նման սրտեր, անոնց մէջ կաթեցնելու կամ արթնցնելու համար յուզումներ և զգացումներ, անցեալի յիշատակներով յաւէտ բուրումնաւեհուում . . .»:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔ. ՏՐԱՊԵՉՈՆՅԻ

Նարեկէն Ոստան մօտ 20 քիլոմէթր է: Թեթևստն երիտասարդներ ենք 18-20 տարեկան: Վաղելով ու խնդալով կը քալենք: Կուզենք ժամանակ վատնել խնդալու և զուարճանալու համար:

— Տղաք, ճամբուսն վրայ սա քիւրտ րեկնակ չը մանենք ու Հաճի Մուսային բարե մը չի տա՞նք:

Հաճի Մուսան ըսա իր բարի սովորութեան նստած էր ճամբու եզրի մեծ ընկուզենիի շուքին տակ ու կը սպասէր ճամբորդ մարդու, որպէսզի մանէ ու իր րեկնային բարիքը վայելէ:

— Բարե, Հաճի Մուսա, ուխտի կ'երթանք Չարահան Ս. Նշան:

— Ձեր ուխտը ի կատար, զաւակներս, հրամանք ըրէք, նստեցէք, քիչ մը հանգստացէք և ապա կ'երթաք: Ի՞նչ ունիք ընելիք, զպրոցական չէ՞ք:

Հաճի Մուսան Ռըշիկ (տոնաման) կը լեցնէր և առանց իր զուխը վեր վերցնելու, մեզ ձեռք առնելով ըսաւ .

— Գպրոցական եղայ, Ոսֆի վրայ կը խաղայ, Ո՛չ աղ պակաս, ո՛չ ալ մաղ: Հօսաղ ցանկ, մեակ քաղի, Մամկն մաղի, մամեկ բրլիե՛: Տրլան ուտե՛, փոքր սրնկի:

Այ ուրիշ բան ունի՞ք ընելիք: Հաճի Մուսան բարի է, զատակասէր ու զուարթ:

Ան իր հարստութիւնը ճամբորդին և աղքատին հետ կը բաժնէ, մէկ փոր հացով, Բաց է անոր սեղանը ու պաղ ջուր, հաց, թանապուր: Այսքան:

— Ըսիք, ուխտի պիտի երթաք Չարահան Ս. Նշան: Սա մէկ զրուշն ալ իմ կողմէ, մամ մը կ'առնէք ու գեորգեմանին վրայ կը վտռէք և ինձմէ ալ Հաճի Նաղթին շատ ու շատ կարօտով կը բարեէք:

Ոտքի ելած էինք ու կը քալէինք միասին՝ երբ հարցուցի .

Հաճի Մուսա, ինչո՞ւ ձեր գիւղը կը կոչուի Չխարէթ:

Հաճի Մուսան իր քայլերը զանդազեցնելով սկսաւ պատմել .

— Տղաս, գիտէր կը նշանակէ, ՈւխտաՎայր: Կը տեսնէք գիւղին տակի սա երկտակ զեհի ծառերը, որոնք իրար փաթթըւելով վե՛ր բարձրացած են, ու, որոնց վարի ճիւղերուն վրայ այնքան թեւ ու գերձան, մաղի փունջեր ու հագուստի կտորներ կան կապուած: Զխարէթ է ան:

Ան կանգ առնելով իր կայլո՛ն (ծխաւ մորջ) վտռեց ու սկսաւ պատմել:

Երկու՛ երկտասնարդ սիրտեր իրար կը սիրէին, մէկ հայի տղայ ու մէկ քիւրտի աղջիկ: Այս մեր գիւղը հի՛ն օրերուն կը կոչուէր Ս. Վարդան վանքի Փայններ: Այս գիւղին երկտասնարդներէն մէկը, Սահակ անունով կը սիրէր Զարեհանից Բէկի գէղեցիկ աղջիկ՝ Զինէին: Զինէն այնքան տարուեցաւ Սահակի սէրէն, որ օր մը անոր հետ փախաւ ու Սահակին հետ վանքը մտան ու պատկուեցան՝ վանահայր Դանիէլ վարդապետէն: Բէկին տղան, Մըրատ Բէկ, չի տանելով այս անարգանքը, գերզատանին արատը մաքրելու համար, անոնց ետեւէն հասաւ ու երկուքն ալ իրենց հարսանեկան անկողնոյն մէջ սպաննեց: Ամբողջ գաւառը, հայ թէ՛ քիւրտ, արցունք աչքերուն մէջ անոնց զիպկները մէկ փոսի մէջ թաղեցին, որոնց մարմինէն զուրս եկաւ այս երկտակ Գեհին, որուն ճիւղերը իրար փաթթելով բարձրացան դէպի երկինք, որպէս նուիրական կոթող իրենց սուրբ սիրոյ:

Այսպէ՛ս, այն օրէն այսօր, քիւրտ թէ՛ հայ սիրոյ ուխտաւորներ կուգան հոս ու իրենց սիրոյ ուխտը կը կապեն անոնց ճիւղերուն ու կ'երթան:

Դուք ալ երթաք բարով, դէ՛, գացէք:

Հաճի Մուսան, մեր զգայուն ջիղերուն դպած էր. մեզմէ ո՛վ չուէր աղջիկ մը իր մտքին մէջ: Իւրաքանչիւրը իր մտքի խոհերուն հետ կը քալէր, առանց զգալու ձամբուն երկարութիւնը: Զը զիտցանք թէ ի՛նչպէս հասանք Ոստան:

Ոստան՝ Արտօս լեռան փէշերուն տակ փռուած պարտէզաչատ քաղաք մըն է, բաժնուած իրար կից գիւղերու: Առջեւի բաց տարածութեան վրայ կառավարական տուներն են կանգնած Ոստան ջուրին աջ ու ձախ կողմը:

Զարահան Ս. Նշան Կեղրոնէն 5 քիւրտ-մէթր հեռու է: Վազելով կը քալենք ու քրտնելով կը հասնինք:

Ամբողջ վանքը խորան մըն էր ստուերափստ ծառերու շրջանակին մէջ ծածկուած: Մեծամեծ ընկուզենիները վանքը իւրենց հովանիին տակ առած էին: Անո՛ւշ զովութիւն մը կը թազաւորէր վանքին շուրջն ու ներսը:

Հոն էր վանքին պահապան հրեշտակ, աշխարհական վանական, Հաճի Նաղօն, որ իր հայրական բարեժպիտ գէմքով մեզ դի-

մաւորեց ու բարձրազաղակ իր սերտութիւնը յայտնելով ըսաւ.

— Ո՛, դուք բարով ու հազար բարով եկաք:

Բարեկին հետ, մեր առաջին խօսքը եղաւ, հաղորդել Հաճի Մուսային բարեկները ու տալ անոր մէկ զրուշը, խունկի ու մոմի համար:

Հաճի Նաղօն շա՛տ զուարթացաւ, իմանալով թէ զինքը յիշողներ կան: Ապա հետաքրքրուեցաւ Հաճի Մուսայի թէքիտայով:

Մեր առաջին գործն ըրինք, նախ տաճարը մտնել:

Տաճարը կիսաստուեր խաւարին մէջ կը ճգնէր: Սուրբին Դամբանը կանթեզի մը լոյսով կը պլպլար: Ծուռնկի եկանք անոր շաւրջը ու մեր մոմերը վառեցինք երկիւղածութեամբ:

«Աւարայրի քաղցրազրուցիկ պլպուլը» կը քնանար այդ պա՛ղ քարերուն տակ տասնչորս և կէս դար շարունակ:

Բայց կը զգայինք որ անոր հոգին հրեշտակին թևերով մեր գլխուն վերե կը սաւառնէր: Անոր հոգին կենդանի էր. անոր փոքրիկ բայց սիրուն գիրքը անոր կենդանի վկան էր. հայ գրականութեանը առաջին մեծ զիւցազնավէպը կը խօսէր մեզի, կը պատմէր Աւարայրի ճակատամարտի մասին, Վարդան սպարապետի մասին, Ղեռնդ Երէցի ու Շուշան Վարդենիի մասին:

Սոխակին ձայնը զուրսէն մեզ հետ կ'երգէր.

— «Պլպուլ, Բեզ համար մեր հարկն ասացին, Թէ չե՛ հաւ, պլպուլ մեր Աւարայրին, Եղիեայ հոգեակն է Բաղքազրուցիկ Որ զՎարդանն ի վարզն սեսնու կարմրիկ...»

«Ո՛հ, դու բարեկամ, այրած սրտերու, Խօսնակ գիւերոյ, հոգեակ վարդերու, Երգէ, պլպուլիկդ, երգէ ի սաբեդ Զանման Բաշին հայոց, երգէ հոգւոյս հետ...»:

Մենք զուրս ելանք, երգը մեր շըրթունքներուն վրայ: Պլպուլը մեզ մրգատանը կը կանչէր, որ, ի տես պատուներու հասած դոյներուն՝ սկսանք Վարդանակերպ պատերազմի. որ՝ «Երկուքեան կողմանէն

լի սրամտութեամբ ու մեծաւ արտօժանօք (բարկութեամբ) յարձակէինք: Եւ ամբօրս աղաղակեն երկոցունց կողմանց՝ իբրև ի մէջ ամպոց շփոթելոց, ճայթմունս ճիւղաց զործէր, և հնչումն ձայնից զքարանձաւսն լիբանց շարժէր: Ի բաղմութենէ սաղաւարտիցն և ի փայլւոյն պատենազէն վառելոցն իբրև նշոյլք ճառագայթից արեգական հատանէին . . . »:

Շահած էինք յազթանակը: Ոստանի զարդալուսն իր կարմրութեամբ ու համի անուութեամբ մէկ հատիկ է աշխարհիս մէջ: Մենք համէն անօթեցած էինք:

Երեկոյեան ընթրիքը մեզ կը զիմաւորէր՝ սերով ու մածունով, թանապօրով և փրփուր լաւաչ հացով:

Երեկոյեան՝ Հաճի Նազօն, ինչպէս մայրահաւը մեզ իր թեւերուն տակը առաւ ու սկսաւ իր քառասուն տարուայ կեանքը պատմել, վանքի այս պատերուն մէջ:

Ան լա՛ւ կը ճանչնար մեր հայրերը, ամէնքն ալ հաճի մարդիկ և Ազթամարի կաթողիկոսարանի մէճիխի անդամները:

Ան՝ ողորմեա տալով մեռածներուն և օրհնութիւն՝ ողջերուն՝ սկսաւ իր զուարթ կատակներուն:

Ան՝ սկսաւ Շատախի Կաճէթի ծրուերէն (ըստ Կ. Սիտալի Կաշաի ծրուեր՝ ինք ալ ըլլալով այդ ծրուերէն), Մոկացի մօրուսաւորներէն, Գաւաշի բիսաւորներէն, Կարկառցի անմօրուններէն՝ Կարճկանցի՝ զարբիններէն, Խիզանցի վարժապետներէն, Սպանկոյցի Լօյօներէն, Մամոտանցի ու Բարկոյցի քրտախօսներէն, և ապա իր մէջ՝ պոսթիկալով ըսաւ. « Խաչատուր Կաթողիկոսի հասցէին . . . »:

— Կաթակոս, կաթակոս, դու որ կաս մեր բէ՛օ՛ղ էչն ես, մենք լէ, քո պոչի տակի ճանճերը . . . Երբ պոչդ շարժես, մենք կը փախչինք, երբ դադրիս՝ մենք պոչիդ տակ կը մտնենք. կաթակոս, կաթակոս, դու որ կաս մեր բէ՛օ՛ղ էչն ես . . . »:

Հաճի Նազօն կը պատմեր ու կը խընդար իր սրտի խորերէն, արցունքներու մէջ կայծ ու բոց կարած:

Ապա ան մեզի պատմեց Խրիմեան Հայրիկէն ու Ոստանի քիւրտ բէկերէն, որոնք տարին մէկ անգամ վանքին սօմուն հացը պիտի ուտէին ու տանէին տունը որ տունը նոյնպէս հաղորդուէր վանքին հացովը:

Ապա, արցունքը աչքերուն մէջ, ան մեզի պատմեց եղերական մահը, Ազթամարի վերջին Կաթողիկոսական Փոխանորդ Արսէն Տ. Վարդապետի սպանութիւնը հայ մարդոց ձեռքով, լիչելով, որ ան՝ էր հովիւն քաջ, որ զանձն իւր գնէր՝ իր հօտին պահպանման ընդդէմ ամէն կարգի պայքարուն:

Ան յիշեց անմահ Խաչիկին և անոր մէկ ամսուան կեանքը վանքին մէջ, Յիշեց Վրթանէս Փափագեանը, ազգագրագէտ երուանդ Լալայեանը, ու, բողմաթիւ հայ թէ՛ օտարազգի հիւրերը որոնք եկեր ու կերակրուեր էին վանքի սեղանէն:

Քեռի Նազօն աւելի ուրախացաւ երբ իմացաւ մեր մտադրութիւնը, Արտօս բարձրանալ ու մտնել Եղիշէի ճգնարանը:

Ան մեզ պատմեց, թէ Եղիշէն առաջ այդ քարայրին մէջ ճգնած է Մովսէս Խրենացին ու կը պնդէր որ Եղիշէն իր գիրքը գրած է Խորենացու ցուցմունքով և անոր օգնութեամբ, քանի որ անոր աչքերու լոյսը տկարացած էր, այն ինչ Եղիշէն տակաւին թարմ ու երիտասարդ էր:

Ան պատմեց այն հալածանքներու մասին որ Խորենացին տեսած էր: Ան իր հետքը կորսնցնելու համար ջաղացպանութիւն կ'ընէր Մոկաց Ապարանից Ս. Կարապետի վանքը, մինչև որ տեղւոյն վարդապետները կ'իմանան ու զինքը այնտեղէն կը վռնտեն, ապա ժամանակ մը կուզայ Անձեացեաց Ամենափրկիչ վանքի ջաղացպանը կ'ըլլայ ու կը վարձանի՝ ըստ աւանդութեանը նոյն վանքին մէջ:

Ան ըսաւ . . .

— Բախտաւոր էք, աղաք, որ ձեր բարձրանալու օրը կը զուգարիպի մեր շօշրարներու (Ոչխարկիթ բանուորներ) մեկնումին: Անոնք այս առաւօտ եկան Փեսանգաշտէն և առաւօտը կը մեկնին զօղանը (զօղոց — եայլա, արօտավայր), անոնց հետ կը մեկնիք, անփորձ կը մնաք, ճամբան չէք կորսնցնիր, քիւրտերուն մէջ չէք մուրիբ և անոնց «չները» ձեզ չեն խածներ:

Գ.Ա.Ի.ԱՇՈՐԳԻ

(Ն. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ)

(Շարունակելի՛ 2)